ԲԱՐԻ ՍԱՄԱՐԱՑԻՆ ԵՎ ԻՄ ՃԱՆԱՊԱՐՀԸ

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐ. ՂՈՒԿ. 10.25-37

*25 Եվ ահա մի օրենսգետ վեր կացավ և նրան **փորձելու** համար ասաց. Վարդապետ, ի՞նչ անեմ, որ հավիտենական կյանքը ժառանգեմ: 26 Հիսուսն ասաց նրան. Օրենքում ի՞նչ է գրված, ինչպե՞ս ես կարդում: 27 Նա պատասխանեց և ասաց. Պիտի սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով, քո ամբողջ զորությամբ ու քո ամբողջ մտքով (Բ Օր. 6.5) և քո ընկերին, ինչպես քո անձը (Ղևտ. 19.18): 28 Եվ նրան ասաց. Ճիշտ պատասխանեցիր. դա արա՛ և կապրես: 29 Իսկ նա, ցանկանալով ինքն իրեն **արդարացնել**, Հիսուսին ասաց. Իսկ ո՞վ է իմ ընկերը:*

*30 Հիսուսն ասաց. Մի մարդ Երուսաղեմից Երիքով էր իջնում և ավազակների ձեռքն ընկավ: Նրանք էլ նրան մերկացրին, վիրավորեցին ու կիսամեռ թողեցին գնացին: 31 Պատահմամբ նույն ճանապարհով մի **քահանա** էր իջնում, որը, նրան տեսնելով, շրջանցեց: 32 Նույն կերպ մի **ղևտացի** էր այդտեղով անցնում և տեսնելով նրան՝ շրջանցեց: 33 Եվ մի **սամարացի**, որ ճանապարհորդում էր, նույն տեղով եկավ, նրան տեսնելով՝ գթաց: 34 Մոտեցավ, նրա վերքերը կապեց՝ վրան ձեթ ու գինի լցնելով, իր գրաստի վրա դնելով՝ նրան մի իջևանատուն տարավ ու խնամեց: 35 Հաջորդ օրը երկու դինար հանեց, իջևանատիրոջը տվեց ու ասաց. Խնամի՛ր նրան և ինչ որ ավելի ծախսես, ես մյուս անգամ վերադառնալիս կվճարեմ քեզ: 36 Հիմա այն երեքից ո՞րն է երևում քեզ՝ թէ ընկեր է եղել այն ավազակների ձեռքն ընկած մարդու համար: 37 Նա ասաց. Նա, ով ողորմեց նրան: Ապա Հիսուսը նրան ասաց. Գնա՛, դո՛ւ էլ այդպես արա:*

***Բարի Սամարացիի առակը** իրականում ոչ միայն պատմում է կարեկցանքի մասին, այլ նաև խոսում է մեր կյանքի սկզբնական ճանապարհի մասին:*

I. ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ԸՆԿԱԾ ՄԱՐԴԸ

Մեկը Երուսաղէմից իջնում էր Երիքով... ավազակները հարձակվեցին նրա վրա...

*Սա **մեր կյանքի պատկերն է առանց Աստծո**. մենք բոլորս ինչ որ մի պահ մեր կյանքում իջել ենք Երուսաղեմից (Աստծո ներկայությունից) դեպի Երիքով (աշխարհի պղծությունը):*

- ***Եսային Ներկայացնում է մարդկության կոտրվածության մասին:***

  Եսայի 1.5-6 – Ամբողջ գլուխը հիվանդ է, ամբողջ սիրտն է նվաղած: Ոտքի ներբանից մինչև գլուխ առողջ տեղ չկա նրա վրա. կապտուկներ, վերքեր, թարախալի խոցեր, որ չեն մաքրվում, չեն վիրակապվում, չեն մեղմացվում ձեթով:

- ***Մեղքը ոչ միայն հոգևորապես մեզ բաժանեց Աստծուց, այլ թողեց մեզ՝***

  - ***Վիրավորված, Անօգնական Կիսամեռ վիճակում:***

    Եվ դուք, որ մեռած էիք հանցանքների ու մեղքերի պատճառով... Բայց Աստված, որ հարուստ է ողորմությամբ, իր առատ սիրո համար, որով մեզ սիրեց, մինչ մեռած էինք մեղքերի հետևանքով, մեզ Քրիստոսի հետ կյանք տվեց: Դուք շնորհով եք փրկված (Եփ. 2.1)

II. ԱՆՑՈՐԴ (ՆԵՐԸ)

Քահանան... նրան տեսնելով, շրջանցեց

Ղևվտացին... տեսնելով նրան՝ շրջանցեց

***Բայց մի Սամարացի**... նրան տեսնելով՝ գթաց... և խնամեց:*

*34 Եւ մօտ եկաւ՝ նորա խոցերը փաթաթեց՝ վերան **ձէթ** եւ **գինի** ածելով.*

Շատ քրիստոնյաներ այսօր փնտրում են միայն ձեթը՝
Սուրբ Հոգու ներկայությունը, հուզիչ կամ զգայական փորձառությունները, և դա լավ է ու անհրաժեշտ է:

***Բայց հիշենք, որ Ա Հովհաննես 1.7-ն հայտնում է** – «…Որդի Հիսուս Քրիստոսի ԱՐՅՈՒՆԸ է մեզ մաքրում ամեն մեղքից»:*

- *Գինին խորհրդանշում է Արյունը, որ մաքրում է մեղքը:*
- *Յուղը խորհրդանշում է Սուրբ Հոգին, որ բուժում է վերքերը:*

  «Առանց Արյան մաքրության՝ Յուղը չի կարող գործել մեր կյանքում»:

  «Արյունը մաքրում է իսկ Յուղը բժշկում է»:

III. ԵԿԵՂԵՑԻՆ ՓՐԿՎԱԾԻ ԽՆԱՄՔԻ ՏՈՒՆՆ Է

35 Հաջորդ օրը երկու դինար հանեց, իջևանատիրոջը տվեց ու ասաց. Խնամի՛ր նրան և ինչ որ ավելի ծախսես, ես մյուս անգամ վերադառնալիս կվճարեմ քեզ:

- *Այստեղ Տերը խնամում է մեզ,*
- *Այստեղ Սուրբ Հոգին բժշկում է մեր վերքերը,*
- *Այստեղ Աստծո Խոսքը զորացնում է մեր հավատքը,*
- *Այստեղ մենք պատրաստվում ենք գնալ ու ուրիշներին էլ բերել:*

Կարդացեք տաս մնասների առակը

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ